Հայտարարություն

Ժամանակակից տեխնիկա Աշխարհացույց ծրագրի դպրոցներին

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամն **«Աշխարհացույց» կրթական ծրագրի** շրջանակներում հայտարարում է **«Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում»** մրցութային ծրագրի մեկնարկը:

ՀՀ կառավարության կողմից բարեգործական ճանաչված այս ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներին վերազինել նորագույն ինտերակտիվ հեղուկ բյուրեղային էկրաններով՝ որպես կրթության հիմնարար իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց: Ժամանակակից սարքերը հնարավորություն կտան Աշխարհացույց կրթական հարթակի օգտագործմամբ կիրառել դասավանդման արդի մեթոդներ և գործիքակազմ՝ բարձրացնելով դասապրոցեսի արդյունավետությունը, հետևաբար՝ սովորողների կրթության որակը:

«Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում» ծրագիրը Հիմնադրամի այլ ծրագրերի նման մշակվել և առաջնահերթություն է ստացել կարիքի հիման վրա արված վերլուծության արդյունքում և լինելու է շարունակական: «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչման ու գործածման վերապատրաստումների ընթացքում ուսուցչական համայնքի ներկայացուցիչները բազմիցս բարձրացրել են խնդրո առարկան՝ դպրոցներում ինտերակտիվ դասեր կազմակերպելու համար տեխնիկական միջոցների բացակայության կամ սղության մասին:

Ծրագրին կարող են դիմել Աշխարհացույց հարթակի կիրառման փորձառություն ունեցող Հայաստանի Հանրապետության հանրակրթական բոլոր այն դպրոցները, որոնք կբավարարեն Ծրագրի համար սահմանված պահանջները:

Ծրագիրը կընթանա մրցութային երկու փուլով: Առաջին փուլը կհաղթահարեն դիմումի բոլոր պահանջները բավարարած դպրոցները: Երկրորդ փուլում դպրոցներից կպահանջվի իրականացնել «Իմ բնակավայրը» խորագրով նախագծային աշխատանք՝ Հիմնադրամի կողմից սահմանված չափանիշների համաձայն: Չափանիշներին համապատասխան լավագույն աշխատանքներ ներկայացրած դպրոցները կստանան ինտերակտիվ էկրան: Ընտրության հարցում հաշվի է առնվելու կարիքի առկայությունը և սարքի նպատակային և լիարժեք շահագործումը: Դիմելու վերջնաժամկետը ս. թ. **սեպտեմբերի 15-ն է**: Դիմելու համար հարկավոր է լրացնել հետևյալ հարցաշարը:

Ծրագրին դիմելու **ՊԱՐՏԱԴԻՐ** փաթեթը

I փուլ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- տնօրենի՝ ծրագրին դիմելու համապատասխան որոշում,
- կազմակերպության կանոնադրությունը, պետական ռեգիստրի վկայականի պատճեն,
- քաղվածք դպրոցի զարգացման ծրագրից տեխնիկական հագեցվածության առնչությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- լիարժեք լրացված հարցաշար,
- մեկ էջի սահմաններում մոտիվացիոն նամակ՝ «Մեր պատկերացրած նորարարական դասապրոցեսը» վերնագրով,
- «Աշխարհացույց» հարթակի միջոցով արված դասերի լուսանկարներ, տեսանյութեր, որոնք պետք է ուղարկել smartschools@visualarmenia.org էլ. հասցեին՝ թեմայում գրելով ծրագրի անվանումը՝ «Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում»:

II փուլ

Առաջին փուլով ընտրված դպրոցները կստանան «Իմ բնակավայրը» թեմայով նախագծային աշխատանք իրականացնելու հնարավորություն՝ **սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 20-ը**: Աշխատանքը պատշաճ իրականացրած դպրոցները մեկ ամսվա ընթացքում կստանան ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային էկրան:

II փուլի իրականացման կարգ

- ստեղծել նախագծային աշխատանք իրականացնողների խումբ (միջառարկայական կապի ապահովումը նախագծի իրականացման գործընթացում կդիտարկվի որպես առավելություն),
- խմբի կազմում պետք է լինեն ուսուցիչներ և աշակերտներ,
- խումբը պետք է նշված ժամկետներում (մինչև հոկտեմբերի 20-ը ներառյալ) իրականացնի նախագծային աշխատանք և ամբողջական տեսքով ուղարկի Աշխարհացույց ծրագրին
- նախագծային աշխատանքը պետք է արվի հետևյալ ձևաչափով, ներբեռնել:

Այսպիսով, երկու փուլերում դպրոցները կընտրվեն ըստ հետևյալ չափանիշների՝

- դասերի կազմակերպում «Աշխարհացույց» կրթական հարթակով,
    - մասնակցությունն Աշխարհացույց ծրագրի վերապատրաստումներին և հավաստագիր ստացած ուսուցչի հանգամանքը կդիտվի որպես առավելություն,
- մոտիվացիոն նամակ,
- դպրոցում Աշխարհացույց կրթական ծրագրին ներգրավված ուսուցիչների քանակ,
- դպրոցում ծրագրի շահառու սովորողների քանակ,
- դպրոցում տեխնիկայի կարիք,
- դպրոցի՝ համայնքում մենթոր դպրոց լինելու կամ դառնալու հանգամանք
- «Իմ բնակավայրը» թեմայով նախագծային աշխատանքի պատշաճ իրականացում,
- ծրագրում շարունակական ներգրավվածություն:

Ի գիտություն՝ ընտրությունը կատարելու է տարբեր կառույցների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ներածություն. խնդրի սահմանում

XXI դարի որակյալ և հասանելի կրթությունը, բացի դասավանդման մեթոդանկավարժական բարձր պահանջներից, ենթադրում է նաև կրթական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում և տիրապետում:

Կրթական նորարարությունների և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը հանրակրթության ոլորտում դարձել է շատ ավելի պահանջված: «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի փորձարկման փուլում (2022 թ. մարտից 2023 թ. մայիս հանդիպել ենք հանրակրթական դպրոցներում առկա հետևյալ խնդիրներին.

- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների պակաս,
- դասավանդման և ուսուցանելու հնացած ու անարդյունավետ մեթոդներ,
- ինտերակտիվ բովանդակության բացակայություն:

Խնդրի լուծում. դպրոցների տեխնիկական վերազինում՝ որպես զարգացման անհրաժեշտ նախապայման

«Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչման ու գործածման վերապատրաստումների ընթացքում ուսուցչական համայնքի ներկայացուցիչները բազմիցս բարձրացրել են խնդրո առարկան՝ դպրոցը չունի տեխնիկական միջոց ինտերակտիվ և ներգրավող դաս կազմակերպելու համար: Խնդիրը վեր է հանվել ու Հիմնադրամի համար դարձել առաջնահերթություն:

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը **«Աշխարհացույց» կրթական ծրագրի** շրջանակներում մրցութային կարգով հնարավորություն է ընձեռում ՀՀ հանրակրթական դպրոցներին լրացնել իրենց տեխնիկական հագեցվածության բացը՝ մասնակցելով հայտարարվող ծրագրին՝ ըստ սահմանված պահահանջների:

Հաջողված օրինակներ. Աշխարհացույց ծրագրի փորձարարական փուլի ընթացքում երկու հանրակրթական դպրոց ստացել են նորագույն ինտերակտիվ էկրաններ: Այդ «դասասենյակները դարձել են դպրոցի նորարարական կենտրոններ», իսկ էկրանը՝ «պատուհան դեպի աշխարհ»

Էկրան ստացած դպրոցը պարտավորվում է.

- տեխնիկան օգտագործել բացառապես դպրոցի կրթական նպատակների համար, ապահովելով դրա տեխնիկական սարքինությունը,
- իրականացնել նախագծային աշխատանքներ,
- իրականացնել նախագծային աշխատանք առնվազն մեկ այլ դպրոցի հետ կիսվել տեխնիկայի տված հնարավորություններով համայնքի այլ դպրոցների հետ՝ կազմակերպելով ճանաչողական ու կիրառական հանդիպումներ:

Ուշադրություն: Հիմնադրամը դպրոցի հետ կնքելու է Տեխնիկայի նվիրատվության պայմանագիր, որտեղ սահմանված են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Նպատակ և արդյունք

«Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրի շրջանակներում հանրակրթական դպրոցներին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակն է նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, որի արդյունքում կձևավորվի առաջին հերթին «Աշխարհացույց» կրթական հարթակից օգտվելու (կայքը՝ https://brainograph.com/) հարթակի օգնությամբ ինտերակտիվ դասեր կազմակերպելու հմտություններ ունեցող, մեթոդամանկավարժական նոր կարողություններ զարգացնող ուսուցչական համայնք, ապա նաև մյուս առարկաների ու տարատեսակ միջոցառումների արդյունավետ ու հիշարժան կազմակերպում, քանի որ նորագույն ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային էկրան բազմաֆունկցիոնալ են և կիրառելի տարբեր առարկաների համար:

Տեխնիկական նման հագեցվածություն ունեցող դպրոցները, որտեղ առկա են նաև վերապատրաստված և վերապատրաստվող մանկավարժներ և կրթության կազմակերպիչներ, կարող են լիարժեքորեն ստանձնել մրցունակ սերունդ կրթելու առաքելությունը՝ քայլելով ժամանակի պահանջներին համընթաց:

Ակնկալվում է, որ «Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում» ծրագիրը կնպաստի «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչմանը և գործածմանը, ծրագրի արդյունավետության բարձրացմանը, որի ընթացքում և արդյունքում դպրոցը՝ իր ուսուցչի և սովորողի հետ.

- կդառնան «Աշխարհացույց» ծրագրի կրողն ու տարածողը,
- կառաջնորդեն գործընկեր դպրոցներին դեպի XXI դարին համահունչ կրթության ուսուցում և դասավանդում,
- կդառնան ինքնաճանաչ և կձևավորեն լայն աշխարհայացքով, գործընկերության պատրաստ և առաջնորդություն ստանձնող համայնք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում» ծրագրի հաջող իրականացումն ու ընդլայնումը մեծապես կնպաստեն մրցունակ դպրոցներ և կրթական միջավայրի ձևավորմանն ու առնվազն այս ծրագրի շրջանակներում կապահովենք միջավայրի կայուն զարգացում: